ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի և «Ռեստարտ Իջևան» գիտակրթական-հասարակական կազմակերպության միջև

«25» 12 2020թ.

Ք.Իջևան

Սույն համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) կնքվում է **Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի** և **«Ռեստարտ Իջևան» գիտակրթական-հասարակական կազմակերպության** (այսուհետ՝ Կազմակերպություն) միջև (այսուհետ միասին՝ Կողմեր):

Հաշվի առնելով ուսանողների առջև ծառացած սոցիալ-տնտեսական մի շարք խնդիրները,

Անհրաժեշտ համարելով կրթական ոլորտում բազմակողմանի համագործակցությունն ու ներառականությունը, ինչը կարող է էապես բարձրացնել կատարվող աշխատանքների արդյունավետությունը,

Կարևորելով և գնահատելով ուսանողների կրթության շարունակականության ապահովումը՝

Կողմերը կնքում են Հուշագիրը՝ հետևյալի մասին

Համագործակցության նպատակը և խնդիրները

Հուշագրի **նպատակն է** աջակցել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ուսանողներին՝ տրամադրելով նրանց անվանական կրթաթոշակներ:

Համագործակցությունն իրականացվելու է հետևյալ **խնդիրների** լուծման ուղղությամբ՝

1. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հետ փոխհամագործակցային կապերի ձևավորում:
2. աշխատանքային քննարկումների կազմակերպում ըստ անհրաժեշտության
3. անվանական կրթաթոշակների տրամադրման հարցում չափանիշների սահմանում,
4. ուսանողների նախնական/վերջնական ընտրության կազմակերպում:
5. անվանական կրթաթոշակների փոխանցման կազմակերպում:

Համագործակցության պայմանները

Հուշագրով համագործակցության շրջանակներում կողմերը նախապես հստակեցում են անվանական կրթաթոշակի համար անհրաժեշտ բոլոր չափանիշները: Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղը կազմակերպում է Անվանական կրթաթոշակի հավակնորդ ուսանողների նախնական ընտրություն:

Հուշագրով համագործակցության շրջանակներում Կազմակերպությունն ապահովում է կրթաթոշակի հավակնորդ ուսանողների վերջնական ընտրության և կազմակերպում է սահմանված գումարի փոխանցում:
Համագործակցության շրջանակներում ԵՊՀ ԻՄ 15 ուսանողներ ստանալու են ամենամսյա ֆինանսական աջակցություն:

Հուշագրի ուժի մեջ մտնելը, փոփոխություններ և լրացումներ կատարելը, գործողության ժամկետը

Հուշագրում փոփոխությունները և լրացումները կարող են կատարվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ և պետք է ձևակերպվեն առանձին արձանագրություններով: Արձանագրություններն ուժի մեջ են մտնում Կողմերի կողմից ստորագրվելուց հետո և կազմում են սույն Հուշագրի անբաժանելի մասը:

Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: Հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ նրանցից մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմին այն դադարեցնելու մտադրության մասին գրավոր ծանուցելուց 15 (տասնհինգ) օր հետո:

ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար

Տնօրենի պաշտոնակատար
Անուշավան Մակարյան

US _____

Կ.Ք

«Ռեստարտ Իջևան» գիտակրթական-հասարակական կազմակերպություն

Գործադիր տնօրեն
Մելինե Գևորգյան

US _____

Կ.Ք